

«Էմինենսի Ազգագրական ժողովածու», հատոր Ե., 1904 թ., գինն է
1 ր. 50 կ.

Ներկայ հատորը պ. Ա. Հայկունու հաւաքած քրդական վէպերից է կազմուած: Խմբագրութիւնը յայտնում է որ «այս վէպերից մի քանիսը, ինչպէս երեսում է համեմատութիւնից, վարիանտներ են՝ տարիներ առաջ յարտնի իրանագէտ Ա. Սոցինի խմբագրութեամբ Գիտութեանց ձեմարանում հրատարակուած՝ քրդական պատմուածքների. այսպէս են՝ Մաս ու Զին, Ռոստամ, Յուսէփ և Չուլէխա, Զանքելի: Բայց մեր ժողովածուն՝ համեմատութեան առնելով գէթ այս ընդհանուր նիւթերը և մանաւանդ Ռոստամի մասին երկու պատմուածքները, թէ հարուստ է Սոցինի հրատարակածներից և թէ բազմատեսակ, թէպէտ և քրդական վիպական նիւթերը անցել են հայ ժողովրդական միջավայրերից»:

Խմբագրութիւնը քրդական երգերի եղանակների մասին մի որոշ գաղափար տալու նպատակով զետեղել է գրքում հ. Կամիտաս վարդապետի ձայնագրած միքանի երգեր:

Վեպերը գրի են առնուած վասպուրականի հայ բարբառներով, Մոկաց, Արծէշի, Արծէշի, Վանայ և այլն. տեղ-տեղ բերած են քրդական լեզուով կտորներ: Միքանի վէպեր թարգմանուած են հայերէն՝ նոր գրական լեզուով:

Այդ հատորի մէջ էլ—հում նիւթի մի ահագին պաշար, որից կարող են օգտուել և մեր ազգագրութեամբ հետաքրքրուողները, ինչպէս և էպիկ բանաստեղծները:

Na.

Արշ. Միկթարեան՝ «Դ. Էպի, Արտեմա ուղիւթառուրիւնը»: Հանրամատչելի գրադարան Հ. Առաքելեանի, ՆԿՊ. Թիֆլիս, 1904 թ., գինն է 40 կ.:

Վազել Եւրոպա, ուր ճամբորդելու ամեն տեսակ յարմարութիւնսկը և քաղաքակիրթ նիստուկացը զուարճալի են դարձնում ժամանցը, լաւ բան է ինարկէ, բայց վաս չէր լինի եթէ մեր քնքշացած ինտելիգենտները երբեմն պտտէին և մեր անքաղաքակիրթ հայրենիքում, աւելի մօտից, աւելի ճիշտ ճանաչելու համար մեր իրականութիւնը, մեր սարերը, ձորեն ու գաշտերը, որոնց մէջ ապրում է մեր ժողովուրդը չճանաչուած մնալով մեր պոռոտախօս իդէոլոգներից: Թութակի նման կըրկնել ուրիշների, թէկուղ մեծ մարդկանց մտքերը, իսկ չցանկանալ ճանաչել այն միջավայրը, պատմական պայմանների այն-

համագումարը, որ կազմում են մի որոշ ժողովրդի ներկան, չհասկանալ առաջադիմութեան հերթական քայլերը և մեծ ինքը նաբաւականութեամբ իրան գիտութեան և հասարակական իդէալների ամենանոր և ամենավիրջին արտայայտութեան ներկայացուցիչ համարել—ահա մեր «երիտասարդութեան» որոշ մասի ուղղութիւնը: Զանազան մողերն ըրոշիւրներից քաղած մտքերի քաօսում, թեթեամիտ խոյանքների խառնախնթոր ժխորում պէտ է երբեմն հնչի սթափեցնող ձայն հայրենիքի մոռացուած անկիւններից, կծանքի փորձով լրջացած խոհական մտքեր արտասանուեն:

Այդպիսի սթափեցնող ձայն է և այս գիրքը, որի իւրաքանչիւր առղ կըում է անկեղծ, մաքուր և ջերմ սիրոյ ու բանաստեղծական ոգևորութեան հետքեր: Թող կարդայ այդ գիրքը, վարակուի նրա աղնուացնող զգացմունքներից անապատի մէջ ճանապարհը կորցրած մեր նոր սերունդի մի մասը...

Na

Մի բացատրութիւն

Թոյլ տուէք մի քանի խօսք ասել «Մուրճ»-ի մէջ իմ գրուածքները քննադատող պլ. Զաւէնի մատենախօսութիւնների առիթով:

Իմ քննադատը եղրակացրել է № 10 Մուրճում, որ «պ. Փափազեան վերջին տարիներս հեինս, շտապով արտադրողի տպաւորութիւն է թողնուած»:

Ընթերցողին հարկ է իմանալ գոնէ, թէ իրաւ ես «հեինս», «շտապ» արտադրող եմ: Փաստերին դիմենք:

Վերջին տարիներս տպագրուած է ընդամենը միայն 7 նոր պատմուածքներ, բոլորը միասին առնելով հազիւ 7 տըպագրական թերթ: Եւ այդ՝ 3—4 տարուայ ընթացքում: Կարծեմ «հեինս» գրողը այսքան չնչին բան չպիտի արտադրէր:

Մուռմ են պլ. Զաւէնի քննադատած գրուածքները. դրանք բոլորն էլ արտատպութիւններ են: «Ասպետը»—տպուած է 1898 թուին, «Ասի» վէպը 1896 թուին (Արձագանքում), «Հուրդադար» 1894-ին (Մուրճում), իսկ «Խելօք ալադաղները» գըրուած է 1895-ին և եթէ տպում է միայն այժմ, դրա պատճառները ինձնից անկախ էին: «Դրախտը» տպուած է 1889 թուին (Աղբիւրում) և այժմեան արտատպութիւնը երրորդ անգամն է:

«Ասի»-ի համար ասել է, թէ նա Բոստանի «Արծուիկ» պիէսի նմանողութիւն է: Սակայն, երբ քննադատում են